«Մոնո» սակագնային փաթեթի պայմանները

1. «Մոնո» սակագնային փաթեթը «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց համար նախատեսված GPON տեխնոլոգիայի միջոցով տրամադրվող «Լայնաշերտ ինտերնետ» ծառայության սակագնային փաթեթ է և իր մեջ ներառում է հետևյալ սակագները.

1. Մոնո 4500
2. Մոնո 6000
3. Մոնո 7000
4. Մոնո 7500
5. Մոնո 8500

Աղյուսակ 1. «Մոնո» սակագնային փաթեթի գնացուցակ

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

«Մոնո» սակագնային փաթեթ	Արագություն (տարեկան պայմանագիր)[1]	Արագություն (անժամկետ պայմանագիր)	Ծառայություն «Տուրբո»	Ամսավճար
Մոնո 4500	105 Մբ/վ	35 Մբ/վ	Հասանելի[2]	4500
Մոնո 6000	120 Մբ/վ	10 Մբ/վ	Հասանելի	6000
Մոնո 7000	150 Մբ/վ	25Մբ/վ	Հասանելի	7000
Մոնո 7500	180 Մբ/վ	45 Մբ/վ	Հասանելի	7500
Մոնո 8500	300 Մբ/վ	75 Մբ/վ	Ներառված[3]	8500

Wi-Fi Սարքի (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) օգտագործման իրավունքը ներառվում է **«Մոնո»** սակագնային փաթեթում (Wi-Fi Սարքը (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) առանց վճարի գանձման և առանց տարեկան բաժանորդագրության պայմանի): Օպերատորի և Բաժանորդի միջև պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

1.1. Բաժանորդագրվելով «Մոնո» սակագնային փաթեթին 1 (մեկ) տարով՝ Բաժանորդը պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 տարի (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր) շարունակ օգտվել «Մոնո» սակագնային փաթեթից:

Մեկ տարով բաժանորդագրության դեպքում Բաժանորդը ստանում է հետևյալ առավելությունները.

i. Բաժանորդը ստանում է Աղյուսակ 1-ով սահմանված տարեկան բաժանորդագրության արագությունները՝ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1(մեկ) տարի (365 օր) շարունակ:

ii. Բաժանորդը ստանում է **50% (հիսուն) զեղչ 4 (չորս) ամսվա ամսավճարների համար**, այսինքն՝ տվյալ սակագնային փաթեթով նախատեսված հիմնական Ծառայությունները առաջին չորս ամսվա ընթացքում տրամադրվում են 50% զեղչով, եթե վաճառքը իրականացվում է բացառապես Ակտիվ վաճառքի, Գործակալների և Հեռախոսազանգերի /Տելեսեյլինգի/ միջոցով: Մնացած այլ ուղղությունների միջոցով վաճառք իրականացնելիս սույն կետով սահմանված **50% (հիսուն) զեղչ 4 (չորս) ամսվա ամսավճարների համար** պայմանը չի գործում:[4]

iii. Բաժանորդը ստանում է **50% (հիսուն) զեղչ 3 (երեք) ամսվա ամսավճարների համար**, այսինքն՝ տվյալ սակագնային փաթեթով նախատեսված հիմնական Ծառայությունները առաջին երեք ամսվա ընթացքում տրամադրվում են 50% զեղչով[5], եթե վաճառքը իրականացվում է

[1] Բաժանորդի ինտերնետի արագությունը չի կարող լինել ավելի, քան 500 (հինգ հարյուր) Մբ/վ:

[2] Եթե որևէ հավելյալ ծառայություն հասանելի է, ապա հնարավոր է ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում՝ վճարելով սահմանված ամսավճարը:

[3] Եթե որևէ հավելյալ ծառայություն ներառված է, ապա տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում տվյալ հավելյալ ծառայության համար չի գանձվում սահմանված ամսավճարը: «Տուրբո» ծառայությունը մատուցվում է բաժանորդի ընտրությամբ, այինքն անկախ այն բանից «Տուրբո» ծառայությունը ներառված է թե հասանելի տվյալ սակագնային փաթեթի շրջանակում, վերջինս տրամադրվում է բացառապես Բաժանորդի ցանկությամբ: Եթե բաժանորդը չի ցանկանում ակտիվացնել «Տուրբո» ծառայությունը, այն չի ակտիվանում, և համապատասխանաբար «TurboSpeed AX1800» սարքը չի տեղադրվում բաժանորդային հասցեում:

[4] Սույն կետով սահմանված պայմանը գործում է բացառապես նոր բաժանորդների համար: Սույն կետով սահմանված պայմանը չի կիրառվում Մոնո 4500 սակագնային փաթեթին մեկ տարով բաժանորդագրության դեպքում:

[5] Սույն կետով սահմանված պայմանը գործում է բացառապես նոր բաժանորդների համար: Սույն կետով սահմանված պայմանը չի կիրառվում Մոնո 4500 սակագնային փաթեթին մեկ տարով բաժանորդագրության դեպքում:

Վաճառքի և սպասարկման սրահներում: Մնացած այլ ուղղությունների միջոցով վաճառք իրականացնելիս սույն կետով սահմանված **50% (հիսուն) զեղչ 3 (երեք) ամսվա ամսավճարների համար** պայմանը չի գործում:

1.2. Եթե Բաժանորդը Ծառայությունների՝ 50% զեղչով տրամադրման ժամանակահատվածում կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի կամ «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի ապա շարունակում է օգտվել 50% զեղչից նոր սակագնային փաթեթով տրամադրվող Ծառայությունների շրջանակում մինչև դրանց 50% զեղչով տրամադրման համար ի սկզբանե սահմանված ժամանակահատվածի ավարտը՝ եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է: Սույն կետում նշված ժամանակահատվածում «Սմարթ» կամ «Ֆիքսլայն» սակագնային փաթեթներին անցման դեպքում Բաժանորդը դադարում է Ծառայություններից օգտվել 50% զեղչով:

1.3. Գործող Բաժանորդը, պարտադիր տարեկան բաժանորդագրության պայմանով միանալով «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի կամ վերակնքելով գործող տարեկան բաժանորդագրությամբ պայմանագիրը «Մոնո» սակագնային փաթեթի շրջանակում՝ ստանում է սույն պայմանների կետ 1.1.-ի **i.** ենթակետով սահմանված առավելությունը:

1.4. Եթե Բաժանորդը ստացել է սույն պայմանների **Աղյուսակ 1-ով սահմանված** սակագնային փաթեթի տարեկան բաժանորդագրության արդյունքում տրամադրված արագությունը և կատարում է սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Մոնո» սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի, «ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթների որևէ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել **Աղյուսակ 1-ով սահմանված *տարեկան բաժանորդագրության արագություններից*** մինչև դրանց համար նախկին սակագնային փաթեթով/սակագնով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարի չափ է: ***Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների Աղյուսակ 1-ով սահմանված տարեկան բաժանորդագրության արագությունները դադարում են գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:***

1.5. «Մոնո» սակագնային փաթեթին բաժանորդագրության դեպքում Պայմաններով սահմանված կարգով Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ Բաժանորդի կողմից վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը երկարում է Ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ, սակայն չի երկարում սույն պայմանների կետ **1.1.** կետով տրամադրվող առավելությունների ժամկետները:

1.6. Եթե Բաժանորդը անցում է կատարում «Մոնո» սակագնային փաթեթի այն սակագնից, որտեղ ներառված է «Տուրբո» ծառայությունը մեկ այլ սակագնային փաթեթի, որտեղ «Տուրբո» ծառայությունը ներառված չէ, ապա «Տուրբո» ծառայության համար սահմանված ամսավճարը սկսում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում՝ անցումը կատարելու պահից սկսած ավտոմատ կերպով: Այս դեպքում բաժանորդն իրավունք ունի հրաժարվել «Տուրբո» ծառայությունից: Եթե բաժանորդը հրաժարվում է «Տուրբո» ծառայությունից, ապա TurboSpeed AX1800 սարքը ապամոնտաժվում է Բաժանորդի բնակարանից՝ ըստ Օպերատորի կողմից սահմանված ընթացակարգի:

1.7. Եթե Բաժանորդը անցում է կատարում «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնից, որտեղ ներառված չէ «Տուրբո» ծառայությունը մեկ այլ սակագնային փաթեթի, որտեղ «Տուրբո» ծառայությունը ներառված է, ապա «Տուրբո» ծառայության համար սահմանված ամսավճարը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում՝ անցումը կատարելու պահից սկսած ավտոմատ կերպով:

1.8. «Մոնո 8500» գործող սակագնային փաթեթներում ներառված է «Տուրբո» ծառայությունը: Տվյալ սակագնային փաթեթների գործող բաժանորդները ավտոմատ կերպով չեն ստանում հնարավորություն օգտվելու «Տուրբո» ծառայությունից, վերջիններս կարող են օգտվել «Տուրբո» ծառայությունից ներկայացնելով գրավոր դիմում Օպերատորի Վաճառքի և սպասարկման սրահներում՝ անկախ գործող սակագնային փաթեթի տեսակից (անժամկետ/ 1 տարի պատադիր բաժանորդագրությամբ):

1.9. Բաժանորդն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվել «Տուրբո» ծառայությունը: Այդ դեպքում Օպերատորը ապամոնտաժում է TurboSpeed AX1800 սարքը Բաժանորդային հասցեից և ծառայության համար սահմանված ամսավճարը դադարում է գործել Բաժանորդի սակագնային փաթեթի շրջանակում:

1.10. Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված Բաժանորդային պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում TurboSpeed AX1800 Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

2. «Մոնո» սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդն օգտվել է մատուցված Ծառայություններից դրանց ակտիվացման օրվանից սկսած առնվազն տասներկու ամիսների (365 օրացուցային օրերի) ընթացքում:

3. Եթե Բաժանորդը բաժանորդագրվել է «Մոնո» սակագնային փաթեթին մեկ տարով և Բաժանորդային պայմանագրի գործողությունը դադարեցվում է՝ Բաժանորդի գործողությամբ կամ անգործությամբ պայմանավորված մինչև սահմանված պարտադիր ժամկետի ավարտը, ապա Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ վճարել ընթացիկ պարտքը և տուգանք 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով: Ֆիզիկական անձանց համար- Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագրից միակողմանի հրաժարման դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդային պայմանագրի լուծում կատարվում է բացառապես Բաժանորդի կողմից մինչև Բաժանորդային պայմանագրի լուծման (դադարեցման) օրը իրեն մատուցված Ծառայությունների արժեքի, ներառյալ ամսական բաժանորդային վճարի, ինչպես նաև Բաժանորդային պայմանագրի միակողմանի լուծման համար Օպերատորի կողմից նախատեսված այլ վճարումների (տույժերը, տուգանքները, հրաժարագին), եթե այդպիսիք առկա են, իրականացման դեպքում: